ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Շվեյցարիայի Համադաշնություն (ԺՆև) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**
   Լուսինե Քոչարյան, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Շվեյցարիայի Համադաշնություն (ԺՆև), հունիսի 8-ից 10-ը, 2026 թ.

3. **Հրավիրող կողմը.**
   Աշխատանքի միջազգային կազմակերպություն (ԱՄԿ)

4. **Գործուղման նպատակը.**
   Մասնակցություն Աշխատանքի միջազգային կազմակերպության Աշխատանքի միջազգային համաժողովի 114-րդ նստաշրջանին:

5. **Քննարկված թեմաները.**
   Այս տարվա նստաշրջանի ընթացքում քննարկման թեմաներն էին արժանապատիվ աշխատանքի ապահովման գործում արհեստական բանականության հնարավորությունների կիրառումը, աշխատանքում գենդերային հավասարության ապահովումը, սոցիալական երկխոսության զարգացումն ու հարթակային տնտեսությունը:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**
   Հայաստանի Հանրապետության եռակողմ պատվիրակությունը ղեկավարել եմ ես, պատվիրակության կազմում ընդգրկված են եղել նաև Միասնական սոցիալական ծառայության, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի և Հայաստանի գործատուների հանրապետական միության ներկայացուցիչները:

   ԱՄԿ համաժողովի 114-րդ նստաշրջանի՝ ս.թ. հունիսի 9-ին կայացած լիագումար նիստի ընթացքում հանդես եմ եկել ելույթով՝ անդրադառնալով

աշխատանքային իրավունքների պաշտպանության, ինչպես նաև կայուն զբաղվածության և արժանապատիվ աշխատանքի ապահովման օրակարգի արդյունավետ իրականացման ուղղությամբ Հայաստանի Հանրապետության կողմից որդեգրած արժեքներին և սկզբունքներին և աշխատանքային օրենսդրության ընթացիկ և շարունակական բարեփոխումներին: Մասնավորապես՝ նշել եմ բոլոր մակարդակներում սոցիալական գործընկերության մեխանիզմները ամրապնդելու և խորացնելու նպատակով գործատուների և արհմիությունների գործունեությունը կարգավորող օրենսդրական շրջանակի վերանայման, ներառական և արժանապատիվ աշխատանքային միջավայրի ձևավորման, աշխատանքային պայմանագրերի թվայնացման գործընթացների, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց և 63 տարեկանից բարձր քաղաքացիների զբաղվածության խթանման ուղղությամբ իրականացվող աշխատանքների մասին:

ԱՄԿ համաժողովի 114-րդ նստաշրջանին մասնակցության շրջանակներում պաշտոնական հանդիպումներ եմ ունեցել Աշխատանքի միջազգային կազմակերպության Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային նորանշանակ տնօրեն Պիտեր վան Ռուիժի և Աշխատանքի միջազգային կազմակերպության տարածաշրջանային գլխավոր տնօրեն–ԱՄԿ գլխավոր տնօրենի գրասենյակի ղեկավար Բեատե Անդրեեսի հետ: Շեշտադրելով աշխատանքային իրավունքների, արժանապատիվ աշխատանքի խթանման և սոցիալական պաշտպանության ամրապնդման գործում Աշխատանքի միջազգային կազմակերպության հետ հաստատված արդյունավետ և համապարփակ համագործակցությանը խոսել եմ, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տարվող ոլորտային բարեփոխումների և ձեռքբերումների մասին, մասնավորապես՝ նշել եմ 2025–2026 թվականներին աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացված կարևոր բարեփոխումների՝ աշխատանքային պայմանագրերի կնքման թվային համակարգի ներդրման, ԱՄԿ-ի թիվ 190 կոնվենցիայի վավերացման, մի շարք պետական ծառայողների և պաշտոնատար անձանց արհմիություններին անդամակցելու սահմանափակումների վերացման, սոցիալական երկխոսության նպատակով Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի կնքման, 2025 թվականին ներդրված սոցիալական աջակցության նոր համակարգի, զբաղվածության նոր ռազմավարության և այլնի մասին:
Աշխատանքի միջազգային կազմակերպության հետ շարունակական և ակտիվ համագործակցության կոնտեքստում նշել եմ Հավասար վարձատրության միջազգային կոալիցիային (EPIC) միանալու նախաձեռնության մասին:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**
   Նստաշրջանի ընթացքում փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

6/16/2026

X

ԼՈՒՍԻՆԵ ՔՈՉԱՐՅԱՆ

9. **Ստորագրությունը, ամսաթիվը:** Signed by: KOCHARYAN LUSINE 6509770407